Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 356-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածով սահմանված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ 2023 թվական

Միջոցառում	Կատարման ընթացիկ վիճակը
Միջոցառում 1.1. Սանիտարիայի և բուսասանիտարիայի աշխատանքային նոր խմբի ձևավորում	«Աշխատանքային նոր խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հուլիսի 26-ի N 711-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի 2023 թվականի մայիսի 12-ի N 519-Ա որոշում:
Միջոցառում 1.2. Սննդամթերքի անվտանգության ոլորտի գործող ինստիտուցիոնալ կառույցների գործունեության բարելավում, նոր կարողությունների զարգացում՝ ԵԱՏՄ և միջազգային չափանիշներին համապատասխան, որի արդյունքում կիստակեցվեն պետական կառավարման համակարգի մարմինների, ինչպես նաև պետական ոչ առևտրային և այլ կազմակերպությունների գործառույթները:	Միջոցառման շրջանակներում Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից մշակվել և շրջանառության փուլում են գտնվում «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Կերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բուսասանիտարիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Միջոցառում 1.3. Սննդամթերքի անվտանգության ոլորտում արագ արձագանքման համակարգի ներդրում	«Սննդամթերքի անվտանգության ոլորտում արագ արձագանքման համակարգի ներդրման կարգը» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Որոշման նախագիծ) սահմանված կարգով ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, սակայն վերջինիս իրավական հիմքի բացակայությամբ պայմանավորված՝ մշակվել, շրջանառվել և ներկայումս լրամշակման փուլում է գտնվում «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է սահմանել համապատասխան լիազորող նորմ, հետևաբար Որոշման նախագծի վերջնական տարբերակը կներկայացվի Օրենքի նախագծի ընդունումից հետո:
Միջոցառում 2.1. Ազգային օրենսդրությունը ԵԱՏՄ և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության վերանայում, իրավական ակտերում սահմանված կարգով փոփոխությունների և լրացումների կատարում, ինչպես նաև մի շարք նոր օրենքների և ենթաօրենդրական ակտերի ընդունում	Միջոցառման շրջանակներում ուսումնասիրվել է սննդամթերքի անվտանգությանը վերաբերող օրենսդրությունը, վեր են հանվել մի շարք բացեր և այն կատարելագործելու նպատակով մշակվել է մոտ երկու տասնյակ իրավական ակտեր:
Միջոցառում 3.1. Լաբորատորիաների ցանցի ստեղծման մեխանիզմների մշակում և անհրաժեշտ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների հստակ հատկորոշում՝ 1. Ներկա իրավիճակի, այդ թվում՝ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների գնահատում, 2. Բացերի գնահատում, կարիքների վերլուծություն, 3. Կարողությունների	Մշակվել է «Լաբորատորիաների ցանցի ստեղծման մեխանիզմների մշակման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը շահագրգիռ մարմիններ շրջանառելուց հետո լրամշակվել է և առաջիկայում կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

հզորացմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում:	
Միջոցառում 3.2. Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակում	Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N 1448-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:
Միջոցառում 4.1. Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների ռիսկերի գնահատման գիտական կենտրոնների նշանակում	««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով սահմանվել է դրույթ, որով ՀՀ կառավարությանը վերապահվում է ռիսկի գնահատման գիտական կենտրոնի լիազորման, լիազորությունների կասեցման և դադարեցման կարգի սահմանումը: Նախագծի ընդունման դեպքում կամրագրվի ռիսկի գնահատման գիտական կենտրոնի լիազորման, լիազորման կասեցման կամ դադարեցման կարգի սահմանման իրավական հիմքը: Մշակվել է «Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկի գնահատումն իրականացնող գիտական կազմակերպության (կենտրոնի) լիազորման կարգը» սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայումս գտնվում է շրջանառման փուլում:
Միջոցառում 5.1. ՎՎՀԿԿ սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման թույլտվության կամ մերժման ընթացակարգի ընդունում:	Մշակվել է ««Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման թույլտվության կամ մերժման ընթացակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որտեղ սահամանվել են վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի և հաստատված պլանի հիման վրա Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից եզրակացության տրման հետ կապված հարաբերությունները: Նախագիծը ներկայացվել է կարծիքի շահագրգիռ մարմիններ (ելից **01/19084-2023 9.11.2023թ.**): Կարծիքները ստանալուց հետո լրամշակվել է ՀՀ արդարադատության ներկայացման նպատակով (ելից **01/23604-2023 7.12. 2023թ.**): Սակայն կարծիքների ամփոփումից, ինչպես նաև հավելյալ քննարկումներից հետո մշակվել է ««Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որտեղ սահմանվել են համապատասխան պահանջները:
Միջոցառում 6.1 Սննդամթերքի անվտանգության ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման դասընթացների շարունակական բարելավում	Մասնագետների վերապատրաստման կարիքները բացահայտելու նպատակով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2023 թվականի հոկտեմբերի 17-ի 02/20144-2023 գրությամբ դիմել է շահագրգիռ մարմիններին՝ վերապատրաստման շրջանակներում դասընթացի թեմաներն ընտրելու վերաբերյալ: Վերը նշված կետի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ համատեղ համահործակցել է Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ և վերջինիս կողմից իրականացվել են մի շարք վերապատրաստման

	դասընթացներ՝ վտանգի վերշուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի վերաբերյալ:
Միջոցառում 6.2 Սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա իրավիճակի գնահատման և ոլորտի բարելավմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) և պետական նպատակային մրցութային ծրագրերի իրականացման համար առաջարկությունների ներկայացում	«Սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա իրավիճակի գնահատման և ոլորտի բարելավմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) և պետական նպատակային մրցութային ծրագրերի իրականացման համար առաջարկությունների ներկայացում» միջոցառման վերաբերյալ քննարկվել և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում թունաքիմիկատների (հատկապես՝ կենսաբանական պայքարի միջոցներ) ստացում և երկրի համար վերջինիս տնտեսական արդյունավետության ուսումնասիրում» թեմայով առաջարկ՝ հաշվի առնելով վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության տարածքում վնասատուների և հիվանդությունների բռնկումներով պայմանավորված թունաքիմիկատների մեծ պաշարների կիրառման անհրաժեշտությունը, ինչպես նաև ամբողջ աշխարհում օրգանական գյուղատնտեսությանն անցնելու միտումները: